

երկիրն Թորթոմայ,՝ Որովհետեւ վնասուած էր («կրակ անկաւ» եւն), պէտք էր նորոգել. եւ զասի ի զլուսի հանած է Կարնոյ Թուանջ զիւղէն Առաքել, որ անձամբ գացած է Ոտոք, հրաւիրանօք եւ ընկերակցութեամբ «Ղուկաս արքեպիսկոպոսին, որ նայ էր առաջնորդ երկրին, որ գնացինք Ոտոք գեղն, լսեցաւ մեր գնարս, քահանայքն եւ տովլաթ(աւ)որքն վերայ եկին, խիստ աղէկ հարկիս արարին» եւն: Այս ամէնուն եւ կազմելուն թուականն է ՌԻՄ = 1591: Իսկ այսօր Որոտ (Կ. Odek) մեծ հովտին մէջ քրիստոնեայ չկայ. ամբողջը մահմետականացած է:

Ծշլիւ այս տարին կամ տարի մը յառաջ Թուրքերը վերջնականապէս գրաւեցին ի միջե այրոց՝ Թորթում գաւառը, թէ եւ կանխաւ ալ հոն մտած էին 1514ին, եւ մանաւանդ 1549ին գրաւած բոլոր բերդերը: Վերջնական գրաւման տարեթիւը կուտան նաեւ մեր Տարեգիրք, երբ օրինակի համար ՌԼԹ (= 1590) տարւոյ համար կը նշանակեն թէ «մեծ սուգ եղեւ քաղաքին (Կարնոյ) քանզի զԹորդոմ-ճո- յորեղն արեւեցն¹:

¹ Հմմտ. «Գիւան պատմութեան Հայոց», հրտ. Գիւտ քհն. Աղանեան, Հար. Ժ, էջ 102: